Արձանագրություն N 3

Երևանի քաղաքապետարանի «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակներում ֆոտովոլտային համակարգերի, ներքին և արտաքին ընդհանուր օգտագործման տարածքների լուսավորման համակարգերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/70» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

08.07.2019թ.
Ժամը՝ 14:30

ք. Երևան

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Սարգսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասլանյան /գնահատող/, Ռ. Գրիգորյան /գնահատող/, Կ. Գրիգորյան /բացող/, Ն. Աբելյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերում առկա անխամապատասխանության շտկման մասին

(Տ. Սարգսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.
- «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին

(Տ. Սարգսյան)

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Ռեդինետ» ՍՊԸ	Բավարար
Էմ Ջի դիզայն ՍՊԸ	Բավարար
«Օպտիմում Էներջի» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Տ. Սարգսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/70» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ռեդինետ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ Էմ Ջի դիզայն ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Տ. Սարգսյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման

ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

4.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Սարգսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4-րդ կետում նշված եզրակացության գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:25-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Սարգսյան

Անդամներ՝ ---------- Ս. Ասլանյան

---------- Ռ. Գրիգորյան

---------- Կ. Գրիգորյան

---------- Ն. Աբելյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան